ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի ներկայացուցիչներ

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 24.04.2020թ.),

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 24.04.2020թ.),

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Միքայելյանի (լիազորագիր, տրված՝ 12.05.2020թ.),

Ա/Ձ Եղիշե Հովսեփյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.1103362),

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչներ՝

Կ. Բաբախանյանի (լիազորագիր, տրված՝ 27.04.2020թ.),

Ք. Մայիլյանի (լիազորագիր, տրված՝ 27.04.2020թ.),

քննելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների

համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից 22.04.2020թ. ներկայացված (23.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը, Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի՝ 28.04.2020թ. ներկայացրած (29.04.2020թ. վարույթ ընդունված) և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի՝ 05.05.2020թ. ներկայացրած (06.05.2020թ. վարույթ ընդունված) համանման բողոքները (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 22.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ–ն՝ ներկայացնելով հայտ՝ 1, 2, 4 և 8 չափաբաժիններով:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4 կետի համաձայն՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող» ՀԿ-ի հայտը մերժել է հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ–ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայություն-ների մատուցման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1, 2, 4 և 8 չափաբաժիններին, սակայն «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Համաձայն ընթացակարգի հրավերի ՄԱՍ 3-ի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա

երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

Այսպես, «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն 24.03.2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանին է ներկայացրել «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրի շրջանակներում Վարսահարդար, Դիմահարդար, Մատնահարդար, Համակարգչային հաշվապահություն մասնագիտության զբաղմունքի ուսուցման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը, ըստ «Լրացուցիչ կրթական ծրարգրերի կազմակերպման և իրականացման կարգի» ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1062-Ն որոշման 15-րդ մասի, մասնագիտական եզրակացություն և երաշխավորություն ստանալու համար»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 13.04.2020թ. որոշում է կայացվել՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված մասնագիտական ծրագրերը երաշխավորել որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրեր՝ մինչև 2023թ.:

Ելնելով վերոհիշյալ պահանջներից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժելով՝ առնվազն գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով մասնակցի մասնակցության իրավունքը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը 1, 2, 4 և 8 չափաբաժինների մասով հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Ընկերությունը 27.04.2020թ. ներկայացրել է վերը շարադրված բողոքի լրացում, որով հայտնել է, հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք 22.04.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 բողոքով, «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ–ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայություն-ների մատուցման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մի շարք չափաբաժիններին և 1, 2, 4 և 8 չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն, «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Համաձայն ընթացակարգի հրավերի ՄԱՍ 3-ի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման

արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից ...:

Գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմումն ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:

Այժմ ըստ հերթականության.

ա) 19.03.2020թ. ժամը 22:06-ին գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովը հայտնել է հետևյալը. «Հարգելի մատակարար, խնդրում եմ 15 օրյա ժամկետում ներկայացնել հաստատված մոդուլային ծրագիրը 1, 2, 4 և 8 չափաբաժինների մասով»:

Հիմք ընդունելով վերը նշված ծանուցումը՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն 24.03.2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանին է ներկայացնում «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում ծրագրի շրջանակներում Վարսահարդար, Դիմահարդար, Մատնահարդար, Համակարգչային հաշվապահություն մասնագիտության զբաղմունքի ուսուցման լրացուցիչ կրության մոդուլային ծրագրերը, ըստ «Լրացուցիչ կրթական ծրարգրերի կազմակերպման և իրականացման կարգի» ՀՀ կառավարության

10.09.2015թ. թիվ 1062-Ն որոշման 15-րդ մասի, մասնագիտական եզրակացություն և երաշխավորություն ստանալու համար»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 13.04.2020թ. որոշում է կայացվել՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված մասնագիտական ծրագրերը երաշխավորել որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրեր՝ մինչև 2023թ., որը ՀԿ-ին ներկայացվել է 15.04.2020թ. էլեկտրոնային եղանակով:

Արդյունքում, երբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժելով՝ ստեղծում է մի իրավիճակ, երբ կարծես թե այդ մոդուլային ծրագրի հաստատումը կախված է եղել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի գործողություններից կամ անգործությունից, այնինչ ՀԿ-ն ստանալով ծանուցումը 19.03.2020թ. ժամը 22:06-ին՝ ծանոթացել և կազմել համապատասխան գրությունը՝ 24.03.2020թ. ուղարկել այն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և պատասխան ստացել միայն 15.04.2020թ. /թվագրված 13.04.2020թ./, այսինքն 15 աշխատանքային օր հետո է միայն ստացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության գրությունը:

Մինչդեռ մոդուլային ծրագրի ուշ ներկայացման պատճառները ընդհանրապես կապված չեն «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից թույլ տրված անգործությամբ, այլ մեր կարծիքով ՀՀ-ում տիրող արտակարգ դրությամբ է միայն պայմանավորված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուշացումով մոդուլային ծրագրի հաստատումը և ներկայացումը: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվեց թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, ըստ վերը նշված որոշման՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվեց արտակարգ դրություն, որի ժամկետը հետագայում ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ երկարաձգվեց մինչև 2020թ. մայիսի 14-ը:

Հետևաբար Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել Մասնակցի կողմից պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

բ) Այնուհետև, 13.04.2020թ. ՀԿ-ին ուղղված գրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տեղեկացվել է հետևյալը. «Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 19.03.2020-10.04.2020 ընկած ժամանակահատվածում պահանջված շտկումը Ձեր կողմից չի ներկայացվել տեղեկացնում եմ, որ Ձեր հայտը մերժվում է:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի 14.04.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը մերժվել է՝ Հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Մինչդեռ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ին ծանուցվել է 19.03.2020թ. ժամը 22:06-ին և հետևաբար պետք է 15 աշխատանքային օր ժամկետ հաշվել ծանուցումը ուղարկելուն հաջորդող օրվանից, այլ ոչ թե 19.03.2020թ.-ից, այլ կերպ ասած 20.03.2020թ. հաջորդող հաջորդ աշխատանքային օրվանից, այն է՝ 23.03.2020թ.:

գ) Հատկանշական է նաև այն փաստական հանգամանքը, թե ինչ իրավական նորմն է հիմք ընդունել գնահատող հանձնաժողովը, որ ՀԿ-ի հայտը մերժելու որոշման մեջ նշվել է նաև, որ ՀԿ-ն հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» (հետայսու նաև՝ Կարգ) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որևէ շտկման հնարավորություն ՀԿ-ին չի տրվել, սակայն անհասկանալի պայմաններում՝ գնահատող հանձնաժողովի կողմից ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել նաև, որ վերը նշված հիմնավորմամբ մերժվել են նաև մնացած այլ մասնակիցների հայտերը, մասնավորապես՝ «ԴԻՍՊՐՈ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի, «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի, «Եղիշե Հովսեփյան Դերենիկի» Ա/Ձ-ի, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի, Արթիկի պետական քոլեջ ՊՈԱԿ-ի հայտերը:

դ) Եվ վերջապես ամենակարևորը. գտնում ենք, որ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը ընդհանրապես սխալ հիմքով է մերժվել:

Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնահատող հանձնաժողովը 14.04.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն մերժել է «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը՝ Հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիրը չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Գնահատող հանձնաժողովը նաև հայտնել է ՀԿ-ին հետևյալը. «Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 19.03.2020-10.04.2020 ընկած ժամանակահատվածում պահանջված շտկումը Ձեր կողմից չի ներկայացվել, տեղեկացնում եմ, որ Ձեր հայտը մերժվում է»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված ժամանակահատվածի համար մասնակցից շտկում չի պահանջվել: Ինչ վերաբերում է 19.03.2020-10.04.2020 ընկած ժամանակահատվածին, որը կազմում է 15 աշխատանքային օր, ապա գնահատող հանձնաժողովը նշված ժամանակահատվածի մասին նշելիս, ըստ երևույթի, նկատի է ունեցել Հրավերի 3-րդ մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացված մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագրի (ծրագրերի) նախագծի փորձաքննության, մասնագիտական եզրակացության և երաշխավորության ստացման գործընթացի ժամկետը դիմումն ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օր է, որի ընթացքում կասեցվում է գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված ու հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման գործընթացը:

Վերոհիշյալ պահանջի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ խոսքը գնում է ինչ-որ դիմումի մասին, որը կարելի է տարբեր կերպ ընկալել, այդ թվում նաև՝ որպես մասնակցի դիմումը՝ ուղղված ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը «դիմում» բառը նույնացրել է գնահատող հանձնաժողովի ուղարկված ծանուցման հետ (ինչը միանշանակ նույն կատեգորիան չէ), և 15 աշխատանքային օրյա ժամկետի սկիզբ է ընդունել ՀԿ-ին ուղարկված ծանուցումը, ինչը ուղղակիորեն նախատեսված չէ հրավերով: Ուստի և այս հիմքով «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի հայտը չէր կարող մերժվել:

Միևնույն ժամանակ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 13.04.2020թ. կայացված որոշումը (ՀԿ-ն ստացել է 15.04.2020թ.) «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից ներկայացված մոդուլային ծրագրերը երաշխավորելու վերաբերյալ ստանալուն պես ՀԿ-ն էլեկտրոնային եղանակով ուղարկել է գնահատող հանձնաժողովին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք իրենց հերթին պնդել են վերը շարադրված բողոքը:

2. <u>Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանը 28.04.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ «Եղիշե Դերենիկի Հովսեփյան»՝ ներկայացնելով հայտ՝ 26-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4 կետի համաձայն՝ Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի հայտը մերժել է հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2- րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ,

համաչափ, հրապարակային ե ոչ խտրական հիմունքնեյավ կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանը մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 26-րդ չափաբաժնի համար, սակայն Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Համաձայն ընթացակարգի հրավերի ՄԱՍ 3-ի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ Մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն Հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և Հայաստանի հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը: Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության

վերջնաժամկետից:

Այսպես, Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանը 23.03.2020թ. ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանին է ներկայացրել «Գործող» մասնագիտության ուսուցման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերը, ըստ «Լրացուցիչ կրթական ծրարգրերի կազմակերպման և իրականացման կարգի» ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1062-Ն որոշման 15-րդ մասի, մասնագիտական եզրակացություն և երաշխավորություն ստանալու համար»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 10.04.2020թ. որոշում է կայացվել Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի կողմից ներկայացված մասնագիտական ծրագրերը երաշխավորել որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրեր մինչև 2023թ.:

Այսպիսով՝ Մոդուլային ծրագրի երաշխավորության հրամանը տրվել է ապրիլի 10-ին, սակայն, տեխնիկական խնդիրների և երկրում հայտարարված արտակարգ իրավիճակի ռեժիմում աշխատող նախարարությունների գերծանրաբեռնվածության հետևանքով երաշխավորության փաստաթղթերը մեզ փոխանցվել են ավելի ուշ: Հետևաբար, մենք այն ներկայացրել ենք գնահատող հանձնաժողովի քարտուղարին: Սակայն, հանձնաժողովը հաշվի չառնելով վերոհիշյալ հանգամանքները, ինչպես նաև այն, որ մոդուլային ծրագրի ներկայացման ժամկետի խախտումը տեղի է ունեցել ոչ ձեռներեցի մեղքով և հարգելի պատճառով, այնուամենայնիվ կայացրել է բողոքարկվող որոշումը:

Ելնելով վերոհիշյալ պահանջներից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի կողմից ներկայացված հայտը հրավերի մաս 3-ով սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժելով առնվազն գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով մասնակցի մասնակցության իրավունքը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները,

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Ա/Ձ Եղիշե Հովսեփյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱԱՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի հայտը 26-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2019թ.՝ ժամը 10:00-ին և 14.05.2020թ.՝ ժամը 10:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը 14.05.2020թ.՝ ժամը 10:40-ին հրավիրված նիստին և պնդել վերը շարադրված համանման բողոքը:

3. <u>«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն 05.05.2020թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է «ԱԱՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն՝ դիմելով 2 ,4, 7 ,8, 14, 19, 20, 21 ,25, 27, 28 չափաբաժինների մասով: Հաղթող է ճանաչվել 7-րդ չափաբաժնի մասով:

Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1. Գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական կազմակերպում,
2. Պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումև նրանց միջև մրցակցության խրախուսում

3. Ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կիետևյալը. 15 աշխատանքային օրվա ընթացքքումամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընթացակարգի սահմանված կարգով, որպես ընտրված մասնակից, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվել է հետևյալը՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվող «Կարող» մասնագիտությամբ ուսուցման ծրագրի երաշխավորությունը, որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր:

Համաձայն ընթացակարգի հրավերի 3-րդ մասի՝ ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերով սահմանվում է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև մոդուլային ծրագրի նախագիծ, իսկ այն մասնակիցները, որոնք արդեն իսկ ունեն ՀՀ կառավարության 2015թ սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երարաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր՝ ներկայացնում են այդ ծրագիրը և ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տված երաշխավորագիրը:

Մրցույթի արդյունքները պարզ լինելուց անմիջապես հետո՝ 2020թ-ի մարտի 20-ին, ուսուցման մոդուլային ծրագիրը «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից համապատասխան գրությամբ ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ՝ «Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժ կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանցմասնագիտական ուսուցման ծրագրի շրջանակներում «Կարող» մասնագիտությամբ զբաղմունքի ուսուցման լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը, ըստ «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգի» ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1062-Ն որոշման 15-րդ մասի, մասնագիտական եզրակացություն և երաշխավորություն ստանալու նպատակով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից 10.04.2020թ. որոշում է կայացվել «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական

ծրագիրը երաշխավորել որպես լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր մինչև 2023 թվականը:

Սակայն, տեխնիկական խնդիրների և երկրում հայտարարված արտակարգ դրության ռեժիմում աշխատող նախարարության գերծանրաբեռնվածության հետևանքով / այսպիսի բացատրություն տվեցին նախարարության աշխատակիցները, չնայած Ուսուցման ազգային հիմնադրամի հետ պայմանագրի վերջնաժամկետ սահմանված է 07.04.2020թ/ երաշխավորության հրամանը փոխանցվել է «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին հրամանի ստացման օրվանից ուշ՝ 16.04.2020թ.-ին, այնուհետև անմիջապես ներկայացվել գնահատող հանձնաժողովին: Արդյունքում՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի «ԱԱՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով հայտը մերժվել է հրավերի մաս 3-ով սահմանված՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալ տեխնիկական խնդիրները և Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումմեր,ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը,բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել որոշումը և վերագնահատել «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 7-րդ չափաբաժնի մասով հայտը՝ հաշվի առնելով այն, որ ԿԳՄՍ նախարարության կողմից մոդուլային ծրագրի երաշխավորության հրամանը հաստատվել է սահմանված ժամկետում, սակայն, «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին ներկայացվել ավելի ուշ:

«Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.05.2019թ.՝ ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված համանման բողոքը:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ 23.04.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/6099-2020, 29.04.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/6339-2020 և 08.05.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/6790-2020 գրությունների՝ բողոքի և համանման բողոքների վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գրություններով հայտնել է, որ տրամադրում է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը և հայտնել հետևյալ դիրքորոշումը.

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.04.2014թ-ի N 534-Ն որոշման հավելված 11-ի 7, 7.1 և 7.2 կետերով սահմանված պահանջները, նախատեսվել է, որ բոլոր մասնակիցները հայտով ներկայացնում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն երաշխավորված՝ մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր և Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից դրա վերաբերյալ տրված երաշխավորագիրը:

Ընդ որում, եթե ծրագիրը երաշխավորված է մինչև հայտը ներկայացնելը, ապա երաշխավորագրի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակում մատուցվելիք ծառայության վերջնաժամկետից:

Հաշվի առնելով վերոնշյալ որոշման պահանջները՝ հրավերով սահմանվել է նաև, որ գնման ընթացակարգի մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորված մասնագիտական ուսուցման տվյալ դասընթացն ապահովող մոդուլային ծրագիր չներկայացվելու դեպքում գնման ընթացակարգին ներկայացված գնման հայտերի գնահատումը կասեցվում է 15 աշխատանքային օրով, որի ընթացքում երաշխավորված մոդուլային ծրագրի չներկայացման պարագայում մասնակցի հայտը մերժվում է:

Վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում գնման հայտ ներկայացրած 15 մասնակիցներից 6-ը՝ «Գործընկերություն և ուսուցում Քաղաքացիական Հասարակությանը և Կրթությանը Աջակցող» հասարակական կազմակեպությունը, «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ն, «ԵՂԻՇԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԴԵՐԵՆԻԿԻ» ԱՁ-ն, ««ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական» հիմնադրամը, «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ն երաշխավորված մոդուլային ծրագրեր չէին ներկայացրել և գնահատող հանձնաժողովի 19.03.2020 որոշմամբ գնման ընթացակարգի գնահատումը կասեցվեց 15 աշխատանքային օրով՝ մինչև 09.04.2020: Միևնույն ժամանակ վերոնշյալ մասնակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով 19.03.2020-ին ուղարկվել են ծանուցումներ, որոնցով առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել երաշխավորված մոդուլային ծրագրերը: Սակայն վերոնշյալ մասնակիցներից ոչ մեկի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել:

Շտկում չներկայացրած մասնակիցների նկատմամբ ցուցաբերվել է միասնական մոտեցում՝ նրանց հայտերը գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվել են: Վերոնշյալ որոշումը համարում ենք իրավաչափ, քանի որ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է հրավերով սահմանված պահանջներով և այդ պահանջների չկիրառումը կամ դրանց հայեցողական մեկնաբանությունը չի կարող համարվել իրավաչափ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ.՝ ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

5. ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 բողոքի և համանման բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***12.03.2020թ.***:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից 22.04.2020թ. ներկայացված բողոքը, Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի կողմից 28.04.2020թ. և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից 05.05.2020թ. ներկայացված համանման բողոքները, «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***12.03.2020թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ն, «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն և Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 14.04.2020թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի և Ա/Ձ Եղիշե Դերենիկի Հովսեփյանի հայտերը մերժվել են՝ հրավերի մաս 3-ով սահմանված՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 17.04.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ հրավերի մաս 3-ով սահմանված՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված մոդուլային ծրագիր չներկայացնելու և հրավերով սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու հիմքով մերժվել է նաև «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.04.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/6099-2020 գրությամբ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրել է armeps.am/ppcm համակարգից արտահանված փաստաթուղթը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող մասնագիտական ուսուցման ծառայությունները արտացոլված են armeps.am/ppcm համակարգում. բացառությամբ վերոնշվածի՝ այլ փաստաթուղթ Պատվիրատուի կողմից չի տրամադրվել, որով կհավաստեր տեղեկագրում՝ www.procurement.am կայքում,

մասնագիտական ուսուցման ծառայությունների մասով հաստատված գնումների պլանի հրապարակած լինելը:

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է, մինչդեռ արձանագրում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստի այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով և համանման բողոքներով վիճարկվող՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների և գործողությունների իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթության աջակցող ՀԿ-ի կողմից 22.04.2020թ. ներկայացված բողոքը, Ա/Ձ Եղիշե Դերենիկի

Հովսեփյանի՝ 28.04.2020թ. և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի՝ 05.05.2020թ. համանման բողոքները մերժել:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**